

լուել է, և ինչպէս միայն մէկ բացատրութիւն կայ և այն է, որ հովանաւորութենից չը զրկվի Բայց որովհետեւ Գ. Ս. և զրա նմանները կը հարցնեն ինչ ծիծաղաշարժ բան կայ այդ տեղ, կասեմ. ծիծաղաշարժ այն է, որ երբ ազգը հայ չունի ուտելու, դուք ուզում էք հասարակական փողերով Վասպարեան անկեանցի պատերը զարդարել:

Այժմ ինչպէս չը կայացաւ մայիսի 3-ին ընդհանուր ժողովը Գ. Ս. և նրա նմանները կը գրանձ «հասարակութեան անտարբերութիւնն է պատճառը». ոչ, պատուելի ընթերցող, այստեղ մի բանի պատճառներ կան, և զրանց մէջ հետաքրքրելի և խտրողացուցիչ (интересный), որոնց մասին ես կը խօսեմ հարկաւոր ժամանակը:

Յետոյ Գ. Ս. ասում է, ես այնքան անբարեխիղճ եմ, որ չը հաղորդեցի թէ պ. պ. Յ. Անանանցը և Գ. Լիանոզեանցը պատկի ծախքը իրանց վրա առին և հետեալաբար նոյն ժողովում հանգանակվեցաւ մօտ 400 թուրքի: Ես այդպիսի մի տեղեկութիւն չը հաղորդեցի, որովհետեւ ես այնքան անամօթ չեմ, չեմ ասում, անբարեխիղճ, որ Գ. Ս. ի նման ամբողջ հասարակութեան առջև փաստերը, նրանց մտօնները, նրանց պատճառները ունակութիւն անեմ:—Ես իմ նամակս գրելիս լաւ համարեցի լուել, քան սուտ խօսել: Իսկ այժմ հարկաւորված Գ. Ս.-ից (медвежья услуга Գ. Ս.-ի կողմից) կասեմ, որ պ. պ. Անանանցը և Լիանոզեանցը իրանց վրա առան պատկի ծախքը ոչ թէ որ և ինչ բարեգործական կամ հերոսական (гражданский героизм) զգացմունքից զրոյթած, ինչպէս ներկայացնում է Գ. Ս. այլ հարկաւորված էին իրանց վրա առնել և այլուպէս հնար չունէին. ինչով էին հարկաւորված, կասեմ, երբ Գ. Ս. կը յանդիման պնդել հակառակը: Բայց ինչն էր զրոյթ Գ. Ս.-ին այդ գործին այդպիսի մի անձնատուրական նշանակութիւն տալ. թող ընթերցողը պատասխանէ:

Ես հարկաւոր չեմ համարում խօսք մինչև անգամ սակ նամակի այն մասի համար, ուր ազնիւ պարտքը դնում է իմ նամակի բովանդակութիւնը. իսկ ինչ կը վերաբերի Յ. ա. ք. Սուրենանցի ժողովրդականութեանը, դա ապագան ցոյց կը տայ, առ այժմ ընթերցողը թող դիմէ Մոսկուայի Յ. ա. ք. Սուրենանցի «Հարիւրամեակի» հետեւել էջերին. 38 և 76:

Այժմ մի քանի խօսք «Մշակի» 67 №-ի նամակի ազդեցութեան մասին Մոսկուայի հասարակութեան վրա: Մի քանի տեղից լսել եմ այսպիսի մի դատողութիւն, թէ նամակը հասարակութեան տրամադրութեանը շատ համապատասխան է, շատերը բաւական են այն նամակովը:

«Իսկ նամակի աւարկաները» զործիչները, որոնց շրթունքները դեռ Գ. Ս.-ի քրտած մկրդը վայելում են, մտադիր են արգելել ուսանողներին ընդհանուր ժողովներին ներկայ լինելու: Իրաւաբանական տեսակէտից կարելի է իրաւունք ունեն այդ անկող, իսկ մարդկային և ազգային տեսակէտերից իրաւունք չունեն և եթէ անեն, սաստիկ կը սխալվեն: Երբ ուսանողութիւնը աշխատում է մտնեալ հասարակութեանը, նրա հետ ծանօթանալու, կեանքի փորձերով հարստանալու, նոյն իսկ հասարակութեան ներկայացուցիչները կամ ազգային գործիչները հեռանում են նրանից, հեռացնում են իրանցից և գրանով գրկում են կեանքի հասանքը հասարակութեան և երիտասարդութեան անչափ հարկաւոր և բնական փոխադարձ ազդեցութիւններից: Այդ ընդհանուր ժողովները «սասնողութեան համար կարող են և պէտք է լինեն հասարակական ուսումնարան, ուր կարելի լինի հասարակական կրթութիւն ստանալ և հասարակութեան զգացմունքները զարգացնել (Общественное воспитание и чувства обществу): Ռուսաց ներքին խտրութեանց բազմակողմանի պատճառներից մէկն, ինչպէս շատ անգամ ուսուցիչ առողջամիտ լրագրողները խօսել են, այն է, որ ուսուցիչ երիտասարդութեան և հասարակութեան մէջ կապեր չը կան: Յանկալի է, որ մեր գործիչները չը մտանան այս ճշմարտութիւնը:

Եւ այդ մտադրութեան մէջ կարելի է տեսնել նոր ազգացոյց (և այդպիսի ազգացոյցներ շատ կան), որ հայերը չեն սովորել հասկանալ ինչ բան է կրթութիւնը: Եթէ մէկը սխալը ցոյց ես տայի, նա իսկոյն դառնում է քո ոխերիմ թըշնամին. նա չէ ուզում հասկանալ քո ասածը. իր

կարծիքը պաշտպանելու տեղ, եթէ համոզված է գրանում, նա յարձակվում է քո անձնատուրութեանը վրա և աշխատում է ցեխել, մրտաւորել: Եթէ նա ընթերցող, ինչ արաւ Սենեքերիմ Արծրունին երբ որ նրան նկատեցին, թէ Համբարում լաւ չէ թարգմանել և որ մէկը ասեմ: Այս երևոյթը ազգացոյցանում է միայն այն, որ մեր այդպիսի հասարակութեան, շարժապէս գործիչները» ծառայում են ոչ թէ ազգի, հասարակութեան օգտին, այլ միայն այն նպատակին, կրթութեան օգտին, այլ միայն այն նպատակին, որ նրանց փառաբանեն, խոնկ ծխեն: Ախոս:

ՆԱՄԱԿ ՓՕԹԻԻՅ

Յունիս 17

Հոգեւոր իշխանութեան կարգադրութեամբ զընացի այցելութեան Արխանդելի երկրում բնակվող հայերին, որոնք գաղթել են Տաճկաստանից անցնել տարի Այդ բնակութեան տեղերի անուններն են Արշալար Մրցեբա, և Վառդի, Հալեյն իրանց կողմից անուանել են «Միջին Հայաստան», ունեն մի քանիստ, իսկ իրանք պարագում են երկրագործութեամբ և շատ աղքատ վիճակի մէջ են: Սոցա ինձ ուզող նամակը ուղարկում եմ խմբագրութեանը տնօրէնութեանը:

Բացի սրանցից թիւրքիայից նոր գաղթած 200 ընտանիք 2 քանաւայով, գտնվում են Սուխումում բաց օդի մէջ և դարձեալ շարունակվում է գաղթականութիւնը: Տեղական հայերը բաւական օգնում են սրանց, հիւանդներին և ծնունդողականներին իրանց տներում տեղ տալով և հոգ տանելով: Զարմանալի է, որ Կ. Պոլսի Ազգային ժողովը թոյլ է տալիս այս գաղթականութեանը, որը մեր ազգի նպատակին սարսափելի հարուստ պէտք է ապա:

Այս վերջինների մասին ներկայացայ Սուխումի նահանգագետին և ինդրեցի ուսուցիչ կառավարութեան որդորած տնօրէնութիւնը: Պ. նահանգագետը ասաց «արդէն կարգադրութիւն եղած է կառավարութեանից տեղ տալ զրանց առանց զրամական օժանդակութեան, իսկ դուք հարուստ հայեր շատ ունէք թիւրքում. թող օգնեն նրանք»:

Այս ողորմելի ժողովրդեան օգնելու մասին, մեծ յոյս կայ ազգասէր պ. կարապետ Պօպօլի վրա:

Գէորգ քան. Գնունի

ՆԱՄԱԿ ԱԼԷՔՍԱՆԴՐՈՊՈՒԻՅ

Յունիս 17-ին

Նորերումս երևացող գիտաւոր աստղը առիթ է դարձել անտոյապաշտ ամբողջի այլ և այլ գուշակութիւններին: Մինը կարծում է, որ կը ռուկ կը լինի անպատճառ և այն էլ մեծ, արհեստեղ կոխի: Ռուբինները ասում են, որ «մահ տարածած» կը լինի, կամ «մահ անսանց»:

«Ստատիկեցին եղինս բազում» — ասել է Էփիմէրդին, — հաստատում են նրանք: Իսկ ոմանք նախագուշակում են որ՝ այդ գիտաւոր աստղը «Հայաստանի աստղն է»:

Յունիսի 15-ին յանձնվեցաւ քաղաքային պ. պ. զէպուտատներին հասարակութեան կողմից մի խնդրագիր կանոնադրութեան հետ միասին, քաղաքում մի «մատենադարան»-ընթերցարան) բանալու համար թոյլտուութիւն ինդրելու կառավարութիւնից, որը ընդունվեցաւ նրանց կողմից մի հաճելի պատրաստակարարութեամբ: Մենք երբէք չենք կասկածում որ ինչպէս պ. պ. զէպուտատները, նոյնպէս և թաղապետական ժողովը զգալով մեր քաղաքում «մատենադարան» ունենալու կարեւորութիւնը, կը յարգէ անչափ հասարակութեան ինդրը և կառնէ պարտուպատշաճ տնօրէնութիւն: Ալէքսանդրօպօլը ցանկանում է ունենալ այն, ինչ որ ունեն շատ գաւառական քաղաքներ շատ վաղուց:

Յանդիմանութեան արժանի էր դարձեալ մի սրտաբեր երևոյթ, որ շատ անտարբեր — ըթմարտներ, որոնց համար երբէք չէ եղել և չը կայ ոչինչ հասարակական, այնպիսի անձուհի պատճառաբանութիւններով հրաժարվում էին ստորագրել «մատենադարանի» խնդրագրութիւն, որ կարծես զրանց կամենում են կողոպտել, կամ թէ չէ, ստորագրելիս թող իսկոյն կը գցէին զրանց շինքը և քաղ կը տային դէպի սպանդարան: Մեզանում հասարակութեան միջին և

ստորին դասակարգերը, եթէ ոչ եւանդով, գոնէ համակրութեամբ են վերաբերվում առհասարակ դէպի այս կամ այն ընդհանրական օգտաւէտ հիմնարկութիւնը և ոչ որպէս մեր նիւթապաշտ ըթմարտները: Թէ որքան անհրաժեշտ է և օգտաւէտ մատենադարան ունենալ մեր քաղաքի փոքր ի շատէ զարգացած հասարակութեան համար, այստեղ բացատրելը շատ հեռուն կը տանէր մեզ: Գա կարօտ է մի մանրամասն և զօրեղ գրուածքի: Այս միայն պարտաւոր եմ համարում յայտնել, որ շատ շատերը սրտատուրի սպասում են նրա բացմանը: Խեղճեր... դեռ չը գիտեն, որ շատ անգամ ամենաաղքէտ մտադրութիւններն էլ հանդիպում են զղկելի արգելքների և անողք ընդդիմադրութիւնների...:

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

Թիֆլիս, 25 յունիսի

Թիֆլիսէն մեկնելուց երկու օր առաջ պարտք եմ համարում իմ շնորհակալութիւնս յայտնել ձեզ հրապարակաւ իմ հրաժարական ներկայացմանը ձեր թատրոնը ինձ անվարձ տալու համար, քանի որ քաղաքային թատրոնը փողով վարձելն անգամ ինձ արգելեցին: Նոյնպէս յայտնում եմ իմ շնորհակալութիւնս Կարոնիային, սիրողներ Փաշայեան-Տէր-Վրդգորիանցին, Փառանձմին, և պ. պ. Չմշկեանին, Չիժեանին, Տէր-Վրդգորեանցին, Սաֆրազեանցին, Միրազեանին, Պարոն-Սարգսեանցին, Մկրտիչ Տէր-Սիմօնեանցին, Կոստանդին Արղոթեանցին, որոնք ազնուարար իմ ներկայացման մասնակցեցին առանց մի որ և է ակնկալութեան, քանի որ Թիֆլիսի հայ դերասանական խումբը չը կարողացաւ անել այդ: Այս առիթով քաղաք պարտք եմ համարում իմ շնորհակալութիւնս յայտնել Թիֆլիսի հասարակութեանը ինձ ցոյց տուած անչափ համակրանայ համար, թէ ներկայացման սկզբում, թէ ներկայացումից յետոյ: Այդպիսի ընդունելութիւն, այդպիսի անկեղծ համակրութիւն, ես երբէք չեմ տեսել: Ես խօսք չեմ գրանում իմ զգացմունքներս յայտնելու, այնչափ ես երախտապարտ եմ Թիֆլիսի հասարակութեանը: Հրապարակաւ իմ շնորհակալութիւնս և մնաս բարեւո ասելով սիրելի և յարգելի հասարակութեանը, մի և նոյն ժամանակ շնորհակալ եմ այն ամեն ծանօթ և անծանօթ ազնիւ պարտներին, որոնք նամակներով ինձ իրանց համակրանքն են յայտնել:

Աստղիկ

ՆԵՐՔԻՆ ԼՈՒԻՐԵՐ

ՇՈՒՂԱԻԲԻՅ մեզ գրում են «Յունիսի 20-ին մի անյայտ անձնատուրութիւն սպանել է պ. Գալուստ Յովհաննիսեանցին, առիթ բռնելով թէ վերալինել պարտքը սաստիկ կերպով հարուստ է իր շանը: Ապանվածը արդէն թաղված է, իսկ չարագործը անհետացել է»:

Շնորհակալութեամբ ստացանք «Մարգար բարոյական զարգացում» գրքից, Վ. Մոզեսովի յօդուածից թարգմանել են Լ. Իւզրախանց և Գ. Մարտիրոսեանց: Թիֆլիս, Մ. Ռոտինեանցի և ընկ. տպարան, 1881 թ.:

Շնորհակալութեամբ ստացանք Բագուից «Սոխակ Հայաստանի» վերնագրով երգերի հաւաքածուն, որ հրատարակել է պ. Ա. Գրիգորեանց: Գա առաջին հատորի փոփոխած երկրորդ տպագրութիւնն է: Երգերի ընտրութիւնը լաւ է: Գրքի տիպը մտքոր է և տեսքը գեղեցիկ: Բագու Մ. Տէր-Յովհաննիսեանցի տպարան 1881 թ.ին:

Մեզ գրում են Մեծ-ՎԱՐՈՒՔԻՆԻՅ հետեւալը: «Օր չէ անցնում, որ մեր անտառաւորութեան մէջ չը կրկնվեն բազմատեսակ անիրաւութիւններ: Վերջերում էլ մի գիւղացի մարդ իր սայլը քշելու ժամանակ, անտառապետի օգնականի հրամանով ստիպված է լինում, լաւ թակվելուց յետոյ, յետ տալ իր սայլի անիւները, որ օգնականին նոր շինված երեքանս: Այսպիսով խեղճ ճանապարհի մէջ տեղ բանախափան է լինում: Օգնականից պակաս դեր չեն խաղում պոլեւոյճիկները»:

Մեծ-Վարաբլիսից մեզ գրում են որ այդտեղի

երիտասարդները սաստիկ վարակված են թղթախաղի ախտով: Ամբողջ օրերը անցնում են այդ յիմար պարապմունքի մէջ: Զարմանալի է որ հայերը, որոնք հուշակված են խելօք ժողովուրդ, ամբողջ օրերը անցնում են թղթախաղի մէջ: Եւ ինչ կարող է աւելի յիմար, աւելի աննպատակ լինել քան թէ թղթախաղը:

Այնքան շատ ենք ստանում ամեն կողմից նամակներ, որոնց մէջ յայտնում են ցանկութիւն գրվել Վերջերի հայաց օրգանին, որ մենք այլ ես չենք կարող տպագրել բոլորի ազգանունները:

ՋԱԼԱԼ-ՕԳԼՈՒՅ մեզ հաղորդում են որ այդտեղի գրողները վարչութիւնը մտադիր է այս տարի տղայաց զարգացում 3-օրը գտատուն ես բանալ: Թղթախաղը զարմանում է այդ զիտաւորութեան մասին, հաստատ գիտնալով որ զարգացի երկրակեայ գանձարկում, որ զընված է եղել 150 թուրքով, ամենին փող չը կայ:

ՕՐԳՈՒԲԱԹԻՅ մեզ գրում են: «Բագուի հայ հասարակութիւնը ընտրել է իր սուրբ Ստեփանոս եկեղեցու գանձապետ իր համարնակիչները մինին, որ գտնվում է տերութեան ծառայութեան մէջ: Այս պարտքը զբաղված լինելով իր ծառայութեան գործերով, իր կողմից իր համար օգնական է ընտրել մի թուրք, որին յանձնել է եկեղեցական հաշիւների մաքրել և ժողովրդից եկեղեցապատկան դրամների պահանջել»:

Ս. ՊԵՏԵՐՆՈՒԳՐԻՅ մեզ հաղորդում են հաստատ աղբիւրներից, որ Մոսկուայի Լազարեան ճեմարանի դիրեկտոր Նիկոլայ Գալեան Գլեխանովի հրաժարականը իր պաշտօնից զբաղղաբար արդէն կատարված իրողութիւն է: Ժողովրդական լուսաւորութեան միջնորդները ընդունելով Գլեխանովի հրաժարականը, լուր կայ որ նշանակելու է նրա տեղ ճեմարանի այժմեան աստուչ պ. Գէորգ Բանասեանցին: «Երանի թէ, աւելացնում է մեր թղթախաղը, պ. Բանասեանց գոնէ այսուհետեւ, ինչպէս հարկն է, գնահատել իր վրա ստանձնելու բարձր պաշտօնի մեծ պատասխանատուութիւնը ամբողջ հայաց ազգի աջակցութեանը: Գլեխանովի հրաժարականը, լուր կայ որ և զգուշութեամբ կատարել իր պարտականութիւնը մեր մայրենի լեզուի վերաբերութեամբ, որ նա, որպէս աստուչ, միշտ աւելորդ է համարել: Բացի սրանից, եթէ ստոյգ է որ պարտք ստանալու է այդ տեղը, կը համարձակվենք նրան յիշեցնել այն, որ գուտուրութեամբ դժուար է գրաւել մի որ և ինչ հասարակութեան համակրութիւնը»:

Ս. ՊԵՏԵՐՆՈՒԳՐԻՅ մեզ գրում են: «Նորին վեհափառութեան հիւանդութեան լուրը և Ս. Էջմիածնի գործերի կառավարելը վահրամ Մանկուտե ձեռքով, մեծ ցաւ է պատճառել մայրաքաղաքի հայերին: Ս. Պետերբուրգի հայ հասարակութիւնը իր յոյսերը դնում է Թիֆլիսի մեր ազգային արթնութեան վրա, որոնք տարակույս չը կայ որ մի օր առաջ չեն վանալ իրանց պատգամաւորների միջնորդութեամբ փրկել ազգային գանձերը, նրանց սպառնող վտանգից»:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՆ

ԻՏԱԼԻԱ

Տունիսի և Նէպոլի մէջ պատահած հակաֆրանսիական ցոյցերի մասին հաղորդում են հետեւալը: Տունիսի մէջ իտալացիներից մի ամբողջ հաւաքվեցաւ Փրանսիական հիւպատոսի տան առաջ, որտեղ ներսն սպասում էր պրեֆեկտը: Շրջակայ փողոցների մէջ զօրքեր էին տեղաւորված: Առաջ իշխանութիւնը փորձեց համոզել ամբոխին հեռանալ, բայց երբ այդ գործը չաջողվեցաւ, կարգապահ յայտնի շախմատ գուշակական օրէնքը: Այնուհետեւ ամբոխը հեռացաւ հիւպատոսի տանից և ցրվեցաւ: Նէպոլի մէջ ամբոխը շրջում էր փողոցներ ի մէջ և կեցցէ էր կանչում ի պատիւ Իտալիայի և իտալական զօրքերի: Պոլիցիայի երկուստ գործուհեութեան շնորհիւ անկարգութիւններ չը պատահեցան:

